

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

« » _____ 2019 թվականի N _____-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՒՄ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի մայիսի 8-ի ՀՕ-31-Ն օրենքի 14-րդ հոդվածը՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման ամբողջ տեքստում, կից հավելվածներում և աղյուսակներում «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն», «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն» և «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն» բառերով՝ համապատասխան հղվածներով:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ ապահովել ընթացիկ տարում սույն որոշման 1-ին կետով պայմանավորված նախկին ՀՎՀՀ-ների, անվանումների և պատվիրատուի ղեկավարների անվանումների նույնականացումը նոր ՀՎՀՀ-ի, անվանման և պատվիրատուի ղեկավարի անվանման հետ՝ պահպանելով նախկին գերատեսչական կոդերը՝ նոր անվանմամբ, բյուջետային գործընթացի բնականոն

գործունեությունն ապահովելու նպատակով:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը ձեռնարկել համապատասխան միջոցներ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործող կազմակերպությունների անվանումները, կանոնադրությունները և անհատականացման միջոցները «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի մայիսի 8-ի ՀՕ-31-Ն օրենքից բխող փոփոխություններին համապատասխանեցնելու ուղղությամբ:

4. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ՀՀ կառավարության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով գնման գործընթացներն իրականացնել՝ չկիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետով սահմանված 60 աշխատանքային օրվա պարտադիր պահանջը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).

Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացված որոշման նախագծի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացվող բյուջետային ծրագրերի կատարման ընթացքն ապահովելու անհրաժեշտությունից:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի մայիսի 8-ի ՀՕ-31-Ն օրենքով ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ՀՀ մշակույթի նախարարությունը և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը միաձուլման ձևով վերակազմակերպվեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության:

Նշվածով պայմանավորված կարիք է առաջացել նշված երեք նախարարությունների կողմից իրականացվող ծրագրերի մասով կատարել փոփոխություններ «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման մեջ՝ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն», «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն» և «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն» բառերը փոխարինելով «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն» բառերով:

Խնդիրն այն է, որ բյուջետային ծրագրերի և միջոցառումների մասով ինչպես ՀՀ կրթության և գիտության նախարարությունն, այնպես էլ ՀՀ մշակույթի և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունները հանդիսանում են ԲԳԿ-ներ և ԲՍԿ-ներ, և առանձին-առանձին ծրագրերի և միջոցառումների մասով փոփոխություններ կատարելը կհանգեցնի մի շարք բարդությունների՝ հաշվի առնելով ծրագրերի և միջոցառումների ծավալն ու մնացորդների ճշտագրումը, ինչպես նաև այն, որ այդ մնացորդները օրըստօրե փոփոխվում են:

Նախարարությունների միաձուլման հետ կապված խնդիրներ են առաջացել 2019 թվականի ՀՀ պետական բյուջեով, որոշ ծրագրերի մասով, գնման գործընթացները կազմակերպելու աշխատանքներում:

Միաժամանակ ընթացիկ տարում մի շարք տեխնիկական խնդիրներ են առաջանալու այդ երեք նախարարությունների նախկին ՀՎՀՀ-ների, գերատեսչական կողերի, անվանումների և պատվիրատուի ղեկավարների անվանումների նույնականացման հարցում (օրինակ, գանձապետական համակարգ մուտքագրված որոշ տվյալներ /ՀՎՀՀ, գերատեսչական կող, անվանում, պատվիրատուի ղեկավարի անուն և այլն/ փոխվել են), և կարիք է առաջացել դրանք նորերի հետ նույնականացնելու մասով:

Կարիք կա նաև նոր ստեղծված նախարարության ենթակայությամբ գործող կազմակերպությունների անվանումների (որոշ դեպքերում անվանումներում առկա է նաև նախարարության անվանումը), կանոնադրությունների և անհատականացման միջոցների փոփոխման:

Կարգավորման նպատակը և բնույթը.

Առաջարկվող նախագծով նախատեսվում է «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն», «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն» և «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն» բառերը փոխարինելով «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և

սպորտի նախարարություն» բառերով, ինչպես նաև լուծում տալ նախկին ՀՎՀՀ-ների, գերատեսչական կողերի, անվանումների և պատվիրատուի ղեկավարների անվանումների նույնականացման հետ կապված տեխնիկական խնդիրներին, ու հանձնարարել փոփոխություններ կատարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործող կազմակերպությունների անվանումներում, կանոնադրություններում և անհատականացման միջոցներում:

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.

Գործող քաղաքականության փոփոխություն չի նախատեսվում:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակիցները:

Իրավական ակտի կիրարկման դեպքում ակնկալվող արդյունքը.

Հայաստանի Հանրապետության կառավարության սույն որոշման նախագծի ընդունման արդյունքում կկարգավորվի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացվող բյուջետային ծրագրերի կատարման ընթացքում առաջացած խնդիրները:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՌԻՄ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՌԻՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ
ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության
կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության
2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N
1515-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ պետական
բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջացնի:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՌԻՄ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.

2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը.

Համապատասխանում է:

3. Այլ տեղեկություններ.

Չկան:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ:

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 27.06.2019 01/8-5/10612-2019</p>	<p>Առաջարկվել է՝ 1. Վերնագրից և 1-ին կետից հանել «վերաբաշխումներ» բառերը, 2. 1-ին կետը խմբագրել, 3. 2-րդ կետից հանել «գերատեսչական կողերի» և «գերատեսչական կողի» բառերը՝ պահպանելով նախկին գերատեսչական կողերը՝ նոր անվանմամբ, բյուջետային գործընթացի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով</p>	<p>Ընդունված է:</p>	<p>Որոշման նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները:</p>
<p>ՀՀ արդարադատության նախարարություն 15.07.2019 01/27.1/15577-2019</p>	<p>Առարկություն և առաջարկություն չկա:</p>	<p>Ընդունված է:</p>	